

Գիտլի Շաբաշվիլի

*Իվանե Զավախիշվիլիի անվան
Թբիլիսիի պետական համալսարան*

**ԵՐԿՐՈՐԴ ԼԵՉՎԻ ԳՐԱՎՈՐ ԲԱՊԱՊՐԱՄԱՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԾԱԳԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Աշխատության մեջ քննարկված են երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի ուսուցման հարուցած հիմնախնդիրները և տրված են դրանց վճռման ուղիները: Մասնավորապես, ներկայացված են լեզվի ուսուցման մի քանի ուշագրավ ասպեկտներ՝ լեզվի տիրապետման աստիճանները, լեզվի ուսուցման իրազեկությունները, լեզվի տիրապետման երեք մակարդակները (նախադասության, պարբերության և տեքստի մակարդակները): Հետազոտման ժամանակ ստացված եզրակացությունները արտացոլված են վերջնական սխեմայում՝ գրելու ուսուցման ասպեկտների հնարավոր քայլերի ցուցադրմամբ:

Գրելը բարդ մտավոր գործընթաց է, որն ընդգրկում է մի քանի աստիճան. գրելու նախապատրաստական փուլ, անմիջապես գրելու գործընթացը, գրածի վերանայելը և ստուգելը՝ խմբագրում, գրածի շնորհանդես և գնահատում: Յուրաքանչյուր աստիճան հավասարապես նշանակալի է և ընդգրկում է կոնկրետ մեթոդներ, յուրօրինակ ռազմավարություններ և ակտիվություններ, որոնց հետազոտմանը և ուսումնասիրմանը բազմաթիվ աշխատություններ են նվիրվել:

Գրավոր ակտիվությունն ինքնըստիներքյան ենթադրում է ստեղծման գործընթաց, լինի դա նարատիվի կամ նկարագրման միջոցով, տեղեկության ուղղակի փոխանցում թե փաստարկված /վերլուծաբանական գրավոր խոսքի սկզբունքների միջոցով տրված տեղեկության վերափոխում /մշակում: Ուրեմն, գրելու գործընթացը ենթադրում է հայտարարագրված գիտելիքի ներկայացում կամ նրա փոխակերպում պայմանական գիտելիքի: Նոր գիտելիքի արդյունավետ և հաջող կառուցքավորում հնարավոր է մետակոգնիտային, կոգնիտային և սոցիալական ռազմավարությունների կիրառությամբ: Այստեղից էլնելով, գրել սովորեցնելը պահանջում է բոլոր այս ռազմավարությունների ակտիվացում,

էլնելով կոնկրետ նպատակից, դրանց գիտակցված, հաջորդաբար կամ հերթագայությամբ կիրառություն:

**Երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի
ուսուցման ժամանակ ծագած
բարդությունները**

Գրելու կարողությունների տիրապետումը առանձնապես բարդանում է երկրորդ լեզվի ուսուցման դեպքում, քանի որ կոգնիտային գործընթացներին զուգահեռ, սովորողը կանգնած է նաև լեզվական իրազեկության բարձրացման հիմնախնդրի առջև:

Վրացական կրթական տարածքում երկրորդ լեզվի ուսուցումը համեմատաբար նոր ուղղություն է, ուսուցիչները ուսումնական գործընթացում բազմաթիվ հիմնախնդիրների են հանդիպում: Առանձնապես դժվարություն է ներկայացնում երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի ուսուցումը, քանի որ այն, մի կողմից՝ կապված է տարբեր իրազեկությունների յուրացման ռազմավարությունների հետ, իսկ մյուս կողմից՝ գիտելիքի փոխակերպման և կառուցքավորման հետ, իսկ վերջնական արդյունքում՝ այս կամ այն ժանրի տեքստի ստեղծման կարողությունների ձևավորման հետ:

Ինչպես հայտնի է, վրացական կրթական տարածքում երկրորդ լեզվի ուսուցումն ընթանում է մի քանի մակարդակի վրա՝ երկլեզու դպրոցներ, լեզվի ուսուցման ծրագրեր դեռահասների համար, վրաց լեզվի նախապատրաստական ծրագիր (www.mes.gov.ge): Չնայած դրան, գրավոր բաղադրամասի ուսուցման տեսակետից, նման բարդություններ են ի հայտ գալիս:

Նախ և առաջ, կարևորագույն արգելքներից մեկը Վրաստանի ոչ վրաց բնակչության վրաց լեզվի տիրապետման ցածր մակարդակն է և, համապատասխանաբար, ցածր լեզվաբանական իրազեկությունը: Այստեղից էլնելով, գրելու ուսուցման ժամանակ առավելագույն դեպքերում տեղի է ունենում միայն պաշտոնական գիտելիքի ձեռքբերում, ինչն, ինքնըստինքյան, ենթադրում է ուսումնական գործընթացի մեջ միայն գիտելիքի փոխանցման մոդելի կիրառում: Դասային / վարժանքային / համալսարանական դասընթացը համեմատաբար պակաս է կառուցվում գիտելիքի փոխակերպման մոդելի հիման վրա: Ուսուցման մեթոդները և ռազմավարությունները ևս, համապատասխանաբար, ուղղված են առաջին տիպի մոդելի յուրացմանը և կատարելագործմանը և սովորողներին էլ ավելի պատրաստ կառույցներ և ձևեր են տրվում, ինչը նպաստում է միայն քերականական և, այս կամ այն չափով, ռազմավարական իրազեկությունների տիրապետմանը: Այս դեպքում սոցիոլեզվաբանական և մշակութային իրազեկությունների ակտիվացումը ուսումնական գործընթացի պլանավորման ժամանակ ավտոմատ կերպով ետին պլան է մղվում: Որոշակի դժվարություն է ներկայացնում նաև բնական, ավթենտային, սոցիոլեզվաբանական և մշակութային իրազեկությունների բարձրացմանը կողմնորոշված ուսումնական նյութերի և տեքստերի սակավությունը:

Բնականաբար հնչում է հարց. ինչպե՞ս պետք է հաղթահարվեն տվյալ դժվարությունները: Ի՞նչ է ենթադրում երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի

ուսուցումը: Ի՞նչ տիպի ռազմավարությունների կիրառությամբ է նվաճվում այն: Աշխատության նպատակն է պատասխանել այս հարցերին, նկարագրել կոնկրետ ակտիվություններ, քննարկել դրանց տեսական հիմունքները, հետազոտման և վերլուծաբանական ու քանակական մեթոդների կիրառությամբ ցույց տալ գործնական արդյունքները, ներկայացնել ԹՊՀ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետում նախապատրաստական ծրագրերի շրջանակներում ոչ վրացալեզու ուսանողների հետ իրականացված փորձերի արդյունքները:

Երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի ուսուցման գործընթացում նախատեսվելիք գործոններ

Գրավոր բաղադրամասի ուսուցումը պետք է իրականացվի ըստ տարբեր ասպեկտների ակտիվացման և լեզվի տիրապետման մակարդակների: Նախ և առաջ, լեզվի տիրապետման տարբեր աստիճանների նախատեսմամբ, գրելու ուսուցման ընթացքում առանձնացնում ենք շարժողական կարողությունների, նախադասության, պարբերության և տեքստի մակարդակները: Ելնելով գրելու նպատակներից, նախատեսում ենք նաև գրելու ժամանակ գիտելիքի փոխանցման և գիտելիքի փոխակերպման մոդելները, նաև, ըստ կոնկրետ նպատակների՝ գրելու փուլերը և աստիճանները: Գրել ուսուցանելիս անպայման պետք է նկատի ունենալ նաև լեզվի տիրապետման իրազեկությունները: Հողվածում քննարկված են լեզվի տիրապետման միայն A1-B2 մակարդակների բնութագրիչները:

Լեզվական/հաղորդակցական իրազեկություններ

Լեզվական, նույն հաղորդակցական իրազեկությունը միջառարկայական ֆենոմեն է, որը լեզվական միջոցների օգնությամբ այս կամ այն գործողության իրականացման հնարավորություն է տալիս (Լեզվի տիրապետման մակարդակների եվրոպական համակարգ):

Լեզվական/ հաղորդակցական իրազեկությունը՝ խոսողական գործողության իրականացման

կարողություն է՝ ըստ կոնկրետ նպատակների և փոխհարաբերական իրավիճակի, ուսանման լեզվում առկա միջոցներով:

Լեզվական/ հաղորդակցական իրազեկության հիմքն է այն կարողությունների միասնականությունը, որը մեզ հնարավորություն է տալիս մասնակցել խոսողական ակտին (այդ թվում խոսողական գործողության տարբեր տեսակներում): Լեզվական/ հաղորդակցական իրազեկություններն ընդգրկում են իրազեկությունների հետևյալ տեսակները.

- **Լեզվաբանական իրազեկություն.** լեզվական համակարգի իմացություն, լեզվի քերականական կանոնների և բառապաշարի կիրառություն, լեզվական համակարգի միջոցով ուրիշի կարծիքները հասկանալու և սեփական վերաբերմունքն արտահայտելու կարողություն: Լեզվաբանական իրազեկությունը հաղորդակցական կարողությունների և հմտությունների գլխավոր բաղադրամասն է, սովորողների կողմից այն նույն նշանակմամբ և հաջողությամբ է կիրառվում, ինչպես մայրենի լեզուն կրողների կողմից:
- **Դիսկուրսիվ իրազեկություն.** ընդարձակ բովանդակության մեկնաբանություն, ընդարձակ տրամաբանական և ադեկվատ տեքստի ստեղծում, դիսկուրսիվ իրազեկությունը նշանակում է տեքստի կառուցքավորման և մեկնաբանության համար սովորողի կողմից որոշակի ռազմավարության կիրառության կարողություն:
- **Սոցիալական իրազեկություն.** հաղորդակցության ընթացքում լեզվի համապատասխանաբար կիրառում: Սոցիալական իրազեկությունն արտահայտվում է ուրիշների հետ հարաբերության ցանկության և հնարավորության մեջ, հաղորդակցական իրավիճակում ճիշտ և համապատասխանաբար կողմնորոշվելու և խոսողի կողմից հաղորդակցական որոշումների և իրավիճակին համապատասխան

արտասանածը համապատասխանաբար կառուցելու կարողության մեջ:

- **Ռազմավարական իրազեկություն.** հաղորդակցական պարտության գիտակցում, կոնկրետ լեզվի մասին գոյություն ունեցած գիտելիքի վերլուծում: Այս իրազեկության միջոցով սովորողը կարող է լեզվի մեջ գոյություն ունեցած թերությունները լրացնել, ոչ մայրենի լեզվով միջավայրում խոսողական և սոցիալական փորձ ձեռք բերել:
 - **Սոցիոմշակութային իրազեկություն.** սոցիումի մասին գոյություն ունեցած գիտելիքի կիրառում, սոցիոմշակութային միջավայրում ստեղծված իրավիճակներում կողմնորոշման, բարդությունների հաղթահարման կարողություն: Սոցիոմշակութային իրազեկությունը ենթադրում է լեզուն կրողի սոցիալական և խոսողական գործունեության յուրահատկությունների ծանոթացում / գիտակցում, օրինակ՝ ավանդույթներ, սովորույթներ, սոցիալական վիճակ, ծիսակատարություններ, երկրագիտություն: Սովորողի մոտ պետք է մշակվի նաև կոնկրետ միջոցների օգնությամբ սոցիալական հաղորդակցության մեջ այս գիտելիքի կիրառության կարողություն (Նվաճումների և մեթոդների ուսուցում, հաղորդակցական իրազեկություն, 2012: Վրաց լեզվի մակարդակների նկարագիր, 2006, էջ 10, Հաղորդակցական իրազեկության դասագիրք, 2009, էջ 18-20):
- Երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի ուսուցման ժամանակ նշանակալի է բոլոր իրազեկությունների փուլերով տիրապետումը: Յուրաքանչյուր իրազեկության նպատակներից և տիրապետելու կարողություններից ելնելով՝ կարելի է կազմել ուսուցման գործընթացում դրանց մատուցման և ակտիվացման հաջորդականություն:
- Երկրորդ լեզու սովորողի մոտ A1 մակարդակում ավելի շատ պետք է ակտիվացնենք լեզվաբանական իրազեկությունները: **A1 մակարդակ** -

սա փուլ է, որի ժամանակ անհրաժեշտ է սովորողի հետ հետաքրքիր թեմաների մասին սկսել զրուցել: Միևնույն ժամանակ սովորողը չի հիմնվում միայն անգիր արած արտահայտությունների սահմանափակ ցանկի վրա, որը վերաբերում է սահմանված իրավիճակին (Վրաց լեզվի տիրապետման մակարդակների նկարագիր, 2006, էջ 12): Այսպիսով, ուսուցման ռազմավարությունները պետք է ուղղված լինեն հենց այս իրազեկությունների բարձրացմանը:

A2 մակարդակը համապատասխանում է հիմք - մակարդակի դասակարգումներին: Հենց այս մակարդակում է ի հայտ գալիս այն դիսկրիպտորների մեծ մասը, որոնք արտացոլում են լեզվի սոցիալական գործառույթը, և որոնք վերաբերում են ամենօրյա կենցաղային թեմաներին (նույն տեղում, էջ 12): Այսպիսով, միանշանակ է, որ ուսուցման այս աստիճանում լեզվաբանական և ռազմավարական իրազեկություններին զուգահեռ ուշադրություն պետք է դարձնենք սոցիալական իրազեկությունների բարձրացմանը: Սովորողին կարող ենք նաև մասամբ մատուցել սոցիոմշակութային իրազեկությունների բաղադրամասեր:

B1 մակարդակ: Սովորողն այս մակարդակում կարող է երկխոսություն վարել և հասնել հաղորդակցության նպատակի մի շարք տարբեր իրավիճակներում՝ հասկանալ դանդաղ տեմպով ընթացող երկարատև խոսքը, արտահայտել սեփական կարծիքը, մեծ քանակությամբ կիրառել պարզ լեզվական միջոցներ, հասկանալի խոսել: Բացի այդ, սովորողը, որը տիրապետում է լեզվի այս մակարդակին, կարող է հաղթահարել ամեն տեսակ կենսական խնդիրներ (նույն տեղում, էջ 13): Համապատասխանաբար, ուսուցման այս աստիճանում երկրորդ լեզուն լեզվաբանական, ռազմավարական և սոցիալական իրազեկությունների տիրապետումը պետք է հնարավորություն տա սովորողին բարձրացնել սոցիոմշակութային իրազեկությունը տարբեր տիպի տեքստերի միջոցով: Հենց այս մակարդակում էլ մասամբ

ակտիվանում է դիսկուրսիվ իրազեկությունը:

B2 մակարդակը գտնվում է սահմանային և հիմք մակարդակներից (B1, A2) բարձր և կոչվում է սահմանային զարգացման մակարդակ: Այս մակարդակում գտնվող սովորողը կարող է պաշտպանել սեփական տեսակետը համապատասխան փաստարկների և բացատրությունների միջոցով, սեփական մեկնաբանությունների ցուցադրմամբ, սեփական տեսակետներն արտահայտել՝ հիմնվելով հրատապ հարցերի շուրջ դրական թե բացասական փաստարկների վրա: Բացի այդ, հայտնի է, որ տվյալ մակարդակի վրա է ի հայտ գալիս դեկրիպտորների նոր խումբ.

1. Դեկրիպտորները վերաբերում են ազատ հարաբերությունների բնագավառին, օրինակ, բնական խոսք վարել, մատուցված տեղեկությունը մանրամասնորեն հասկանալ: 2. Դեկրիպտորների երկրորդ խումբը պատկանում է լեզվի ավելի լիարժեք տիրապետմանը: Սա լեզվի իմացության այն առաջընթաց աստիճանն է, երբ սովորողը կարող է թյուրիմացություն հարուցող սխալներն ուղղել, վերահսկել իր խոսքը (նույն տեղում, էջ 14-15): Այս մակարդակում բոլոր վերոնշյալ իրազեկություններին զուգահեռ ակտիվանում է նաև դիսկուրսիվ իրազեկությունը, ինչն ուղղված է տարբեր տիպի կազմակերպված տեքստի ստեղծման:

Գրելու գործընթացի մակարդակները

Լեզվի տիրապետման տարբեր աստիճաններում անհրաժեշտ է հաղթահարել տարբեր մակարդակների գրավոր խնդիրներ: Գոյություն ունեցած գրավոր խնդիրների փուլերով հաղթահարման համար ամենաարդյունավետ մոտեցում կարող ենք համարել նախադասության, պարբերության և տեքստի մակարդակների առանձնացումը: Գրավոր ակտիվություններն էլ հենց այս մակարդակներին համապատասխան պետք է մատուցենք սովորողին: Լեզվի ուսուցման A1 աստիճանում մտորային կարողությունների զարգացման ուղղված ակտիվություններին զուգահեռ,

նախադասության մակարդակի հետ կապված, անհրաժեշտ է առաջադրանքներ և վարժություններ մատուցել՝ լեզվաբանական և ռազմավարական իրազեկությունների զարգացման նպատակով: A1 աստիճանում սովորողի սոցիալական իրազեկությունների բարձրացումը պահանջում է զարգացնել նախադասության և պարբերության մակարդակները: Լեզվի ուսումնասիրման B1 աստիճանի վրա գտնվողների համար անհրաժեշտ է ամրապնդել/ հզորացնել նախադասության և պարբերության մակարդակը համեմատաբար ավելի բարդ ակտիվությունների օգնությամբ, որպեսզի այս մակարդակում ակտիվացած սոցիոմշակութային իրազեկությունների միջոցով սովորողների մոտ զարգանան հաջող գրավոր հաղորդակցության հաստատման կարողություններ: Ինչ վերաբերում է լեզվի ուսանման B2 աստիճանին, լրացուցիչ դիսկուրսիվ իրազեկությունների ակտիվացման համար անհրաժեշտ է գրել սովորեցնելու գործընթացի մեջ ներմուծել տեքստի մակարդակ, ինչը ենթադրում է կազմակերպված, փաստարկված տեքստի ստեղծման կարողությունների զարգացում:

Նախադասության մակարդակ

Այս մակարդակում պարզ և բարդ նախադասությունների շրջանակներում կատարվում են տարբեր տիպի վարժություններ: Սովորողը պետք է կարողանա ոչ միայն նախադասության մեջ ճանաչել և ուղղել ոչ ճիշտ ձևերը, այլև ելնելով կոնկրետ նպատակներից, կազմել տարբեր բովանդակության և եղանակի նախադասություններ: Ստորև բերում ենք ակտիվությունների ցանկ, որոնք ուսուցչին կօգնեն նախնական մակարդակում արդյունավետ վարել գրելու գործընթացը:

- Բառերի տեղադրում:
- Տրված բառերով նախադասություններ կազմել:
- Ավարտել նախադասությունը:
- Ուղղել նախադասության սխալները:
- Հարցերին տալ դրական կամ բացասական պատասխան:
- Հարցեր կազմել:
- Պարզ երկխոսություն կազմել:

- Նախադասությունը փոփոխել՝ ըստ բայի դեմքի, ժամանակի և թվի:
- Տրված թեմայով նախադասություններ կազմել:

Պարբերության մակարդակ

Ինչպես նշեցինք վերևում, լեզվի տիրապետման ցածր աստիճանում գտնվող սովորողի համար ակտիվանում է նաև պարբերության մակարդակը: Գիտելիքի փոխանցման մոդելին զուգահեռ սովորողին այստեղ փուլերով մատուցվում է մի քանի կոգնիտային և մետակոգնիտային ռազմավարություն: Լեզվաբանական իրազեկության համաձայն կազմած նախադասությունների հիման վրա, սովորողը տիրապետում է մեկ կոնկրետ հարցի / երևույթի/ փաստի / իրի հետ կապված պարբերության (կարճ պարզ տեքստի) ստեղծման կարողությունների: Սովորողին կարող ենք առաջարկել նրա կողմից կազմված եղանակային նախադասություններն ընդլայնել՝ կոնկրետ մատնանշված կամ սեփական օրինակներով:

Կարևոր գործոններից մեկը, որը պետք է նկատի ունենանք այս փուլում, սովորողի կողմից իր կամ իր խմբակցի կազմված պարբերության վերընթերցման, վերստուգման, գիտակցման կարողությունն է: Հենց պարբերության մակարդակում պետք է ակտիվացնենք կոգնիտային ռազմավարություններից մեկը՝ գրածի ստուգումը:

Որպեսզի գրելու ընթացքում սովորողը կարողանա տրամաբանորեն կառուցել պարբերությունը, նրա ուշադրությունը պետք է կենտրոնացնենք նախադասության կապակցման նպատակով անդամ-շաղկապների կիրառության վրա և այս տեսակետից հատուկ ստեղծված վարժություններ առաջարկենք նրան:

Չպետք է մոռանանք նաև այն, որ հենց պարբերության մակարդակի հետ պետք է կապենք սովորողի սոցիոմշակութային իրազեկության բարձրացումը: Այսպիսով, այս դեպքում դասարանական միջավայր պետք է ներմուծենք հատուկ հարմարեցված տեքստեր, որոնց գիտակցման հիման վրա էլ սովորողները մի կողմից՝ կկատարեն գրավոր

առաջադրանքները, իսկ մյուս կողմից՝ կծանոթանան իրենց համար ոչ հայրենի սոցիումի սոցիալական և մշակութային յուրահատկություններին: Այս տիպի տեքստերը, ելնելով տեքստի բարդությունից, հնարավոր է սովորողին ներկայացնել նաև մայրենի լեզվով:

- Երևույթի / փաստի / իրի նկարագրում մի քանի նախադասությամբ:
- Շաղկապների և նախադասության կապակցման միջոցների կիրառում:
- Զուգորդական հարցերին պատասխան տալ:
- Հարցին հիմնավորված պատասխան տալ:
- Հանգուցային նախադասություն կազմել:
- Հանգուցային նախադասությունը ընդարձակել կոնկրետ օրինակներով / փաստարկներով:
- Սեփական վերաբերմունքի արտահայտում:
- Նախադասությունների տրամաբանական հաջորդականությամբ դասավորում:
- Պարբերության մեջ գտնել անհամապատասխան նախադասությունները և հանել:
- Կոնկրետ նպատակին համապատասխան ստեղծել տրամաբանորեն կազմակերպված պարբերություն:
- Ստուգել:

Տեքստի մակարդակ

Երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի ուսուցման բարդ խնդիրներից մեկը նոր գաղափարների ձևավորումն է, պայմանական գիտելիքի ստեղծումը կոգնիտային և մետակոգնիտային ռազմավարությունների կիրառությամբ, տեքստի տեսակների և դրանց յուրահատկության նախատեսում, տեքստի կառուցվածքային կազմակերպում, գրածի ստուգում: Տրամաբանորեն կազմակերպված փաստարկված / վերլուծական տեքստի ստեղծման ժամանակ սովորողը մի քանի գործողություն է իրականացնում. տեղեկության կառուցվածքում,

տեղեկության փոխակերպում և նրա կազմակերպված ընդլայնում (Մելի, Չամոտ, 1990, 42): Միննույն ժամանակ, տեքստ ստեղծողը պետք է նախատեսի սոցիալական և սոցիոկոգնիտային ասպեկտների յուրահատկությունը, համապատասխան ձևով գիտակցի վարժողի կողմից մատուցված նյութը կամ տարբեր աղբյուրներից հայթայթի իրեն անհրաժեշտ տեղեկությունը:

Բնական է, որ այս մակարդակում տեքստի ստեղծումը համեմատաբար բարձր լեզվաբանական իրազեկություն է պահանջում, չնայած դրան, լեզվական սխալների վերլուծությունը և ակտիվություններն այս դեպքում ևս պետք է մատուցվեն լեզու սովորողին:

Լեզվական տրանսֆերը կարևորագույն կոգնիտային գործոններից մեկն է, որը կապվում է լեզվական սխալներ թույլ տալու հաճախականության հետ (Մայելս, 2002), չնայած նրա կիրառությունը թուլատրելի է տեքստի ստեղծման գործընթացում ևս: Թարգմանության ռազմավարությունների կիրառությամբ սովորողը կարող է ձևակերպել գաղափարներ և դրանք դասավորել մայրենի լեզվով, իսկ այնուհետև ներկայացնել և կազմակերպված ձև տալ երկրորդ լեզվով (Պուրպուրա, 1999):

Տեքստի մակարդակում ծագած բարդությունների և խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է դասարանական միջավայրում իրականացնել հետևյալ տիպի ակտիվություններ.

- Գաղափարների ծնում, բանավոր դատողություն:
- Հարմարեցված /ավթենտային տեքստի քննադատական ընթերցում, գիտակցում, մշակում, վերլուծում:
- Կոնկրետ նպատակից ելնելով՝ հանել տեքստից էական տեղեկությունները և դրա հիման վրա սեփական կարծիքները և վերաբերմունքները գրավոր փոխանցել համապատասխան փաստարկներով, մեջբերման և փոխակերպման եղանակների միջոցով:
- Համառոտ բովանդակության

- ստեղծում:
- Ծանոթացում տեքստի կառուցվածքին (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն):
- Տեքստի որոշակի մասերի ստեղծում:
- Տեքստի ստեղծման նախապատրաստական փուլեր մայրենի լեզվով, իսկ սրանից հետո կազմակերպված տեքստի ստեղծում երկրորդ լեզվով:
- Տարբեր տիպի տեքստերի (փաստարկված, գործառական) ստեղծում:

Լեզվի ուսուցման աստիճանների համաձայն, դասարանական միջավայրում ուսուցիչը կարող է կիրառել մի քանի ռազմավարություն միաժամանակ կամ հաջորդաբար, որպեսզի սովորողներն ունենան բարձր մոտիվացիա և նրանց մոտ մշակվեն լեզվի տիրապետման մակարդակին համապատասխան իրազեկություններ:

Առաջարկում ենք ակտիվությունների ցանկ, որոնք հնարավոր է իրականացնել ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքի ժամանակ:

Անհատական աշխատանք

- Վիզուալ, ատլիտ և գրավոր տեքստի վերլուծում:
- Տեքստի առանձին մասերի առանձնացում և գնահատում:
- Տեքստի հետ կապված ածականների և բայերի դուրսգրում:
- Տրված բառապաշարային միավորների հիման վրա փոքր տեքստի ստեղծում:
- Տեքստի ստուգում:
- Ուսանողների համար նշանակալի ազգային իրի պատմության փոխանցում, նկարագրում, ծնողների և բարեկամների հարցազրույց, հեղինակի վերաբերմունքի ներկայացում:
- Տեքստի և իրի շնորհանդես:
- Հարցերին պատասխանել:

Խմբային աշխատանք

- Լսել, տեսանելիացնել:
- Գաղափարների կուտակում, դաստորություն:


- Անհատականորեն ստեղծած տեքստի փոխանակում և ստուգում, լեզվական, իմաստային, տրամաբանական սխալները գտնել և ուղղել:
- Ծանոթ թեմայով համատեղ շնորհանդեսի պատրաստում:
- Գովազդային տեքստի պատրաստում խմբով:
- Տրված թեմայի վերաբերյալ մտավոր գրոհի միջոցով գրել ծանոթ բառապաշարը, դարձվածքներ և հարցեր:
- Գրված բառապաշարային, դարձվածքային նյութի հիման վրա ուսուցչի կողմից լրացուցիչ բառապաշարի, դարձվածքների և հարցերի ուսուցում (մակարդակի նախատեսմամբ):
- Տրված նյութի մասին համատեղ տեղեկությունների ստեղծում և խմբային շնորհանդես:

Սովորողին կարող ենք մատուցել նկար/լուսանկար և դրանց հիման վրա խնդրենք ստեղծել տեքստ: Առաջադրանքը նպատակ պետք է նախանշի սովորողի մեջ ակտիվացնել ինչպես գիտելիքի փոխանցման, այնպես էլ գիտելիքի փոխակերպման մոդելները: Մասնավորապես, պետք է խնդրենք լսարանին. 1. Նկարագրել նկարը (ո՞վ է պատկերված, որտե՞ղ է տեղի ունենում գործողությունը, ե՞րբ է տեղի ունենում գործողությունը): 2. Արտահայտել սեփական ենթադրությունը (ի՞նչ են մտածում հերոսները, ի՞նչ տարիքի և մասնագիտության են հերոսները, ինչի՞ մասին են խոսում հերոսները, ի՞նչ նպատակով են հավաքված մարդիկ, ո՞ւր են գնում նկարի / լուսանկարի վրա պատկերված մարդիկ և այլն): Առաջին դեպքում սովորողը գրելու դեպքում կատարում է տեղեկության կառուցավորում, իսկ երկրորդ դեպքում՝ տեղեկության փոխակերպում և ընդլայնում: Այս ակտիվությունից հետո ուսուցիչը ստուգում է գրածները և ընթանում է սխալների և ստացած տեքստի թույլ և ուժեղ կողմերի քննարկում: Առանձնահատուկ ուշադրություն է կենտրոնանում նրա վրա, թե որքանով տրամաբանական են իրար հետ կապված առանձին արտահայտություններ, արդյոք

հեղինակը կիրառել է բազմապիսի բառապաշար, անդամ-շաղկապներ, եղանակային նախադասություններ, լեզվական միջոցներ: Որքանով միանշանակ և համոզիչ է փոխանցել իր դիրքորոշումը: Սրանից հետո աշակերտները / ուսանողները/ վարժանքի մասնակիցները սկսում են բանավոր դատողություն, տեղեկության փոխանակում, արտահայտում են սեփական կարծիքները, միմյանց հարցեր տալիս: Վերջնական արդյունքում այս տիպի ակտիվությունը նպաստում է

գրելու ընթացքում սովորողի՝ պարբերության և տեքստի մակարդակի խորացմանը/ակտիվացմանը և հնարավորություն է տալիս նրան բարձր մոտիվացիայի հիման վրա առավելագույնս դրսևորել իր երևակայությունը, գիտելիքը: Ըստ տրված նկարի, ԹՂՀ-ի նախապատրաստական ծրագրի ուսանողները ստեղծել են հետևյալ տեքստերը, ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

Նկար.



ՏԵՔՍՏԵՐ

I.

Աղաբեկ

Ամ Տւրատեւ յեղձաւոտ 4 աձամիանս. Տամնի Տեղձան ձա րոտի ձաձիս տաւիսի եղձոբարցիոտ. հեմի աՅրիոտ, յե Տւրատի աըրոպորտիմի առիս ձաճաճըլլի, ձաձըձան աըՑ յըտ ժիւհաՅի յըր յիոպոլիոտ ժիՅըձաՅ Տեձաձըձե. ձա ձանցիՑ աը առիս, ձաձըձան ձանցըձեՅի ոձորձըլլըձիան հանտըձիոտ աը ձաձիան. Տամնի տաւիանտ ձըիսե յըլոձըլլըձիան. իսինի կոլըլլըձեՅի առիան, Տաոձալըլլըձիանի ձա ժըլոձըձի կաՑի աձ Տամիս Մորիս յըլլըլաՅը ժոճըլլըձիա. Մորիձան հանս ձաձըլլիձ-ձաճանցըլլի ժը Յաւըրի. աՅըՅը աըձա յար, ձաճըձոձ աճըճ ժաս տաւի ժիճըլլիս ֆորձիսա, ալձաոտ յարՑըճնիլլոձիս ձըձալլա. Մըլլըլլըլլա յոճըլլաոտ, ձոձոձ կաՑի Մորիձան հաձըլլըլլա. աձաճ ժոլլիձըձեՅ ժիճի ձաձըլլիձի Տիարըլլի ձա Տաձըլլաձա ձաձըլլի եղձոբարցի.

II.

Կարինե

Աձ Տւրատեւ յաձըլլաՅըլլա աըրոպորտի. աձ Տւրատեւ յաձըլլաՅըլլա ոտի կաՑի, ՏաձաՑ Տեձաձըլլա Տեղձան Տամի կաՑի, յիձաՑա յըլլոձըլլըձիան. աձ Տամի կաՑի

ժոճըլլըձի առիան. Յաձաոձառիա, իսինի հաՑըլլըլլա յըլլըլլա տոձըլլի ՑանսաՑըլլըլլա. Տաոձալըլլաձի աձաձիանի ձալլիան ժոլլիլլըլլա յըլլ. իսինի ձաձարաձոձըլլըլլա, ձոձ Մըլլըլլա յըլլաձիա, ժաձըլլաձ տըլլոձըլլըլլաձի ճըր աը ժոճըլլըլլա. աձ Տամի կաՑի Տաճարտըլլըլլաձ ժըլլըլլաձ կաՑըլլաձի առիան, իսինի յըլլինոձա, ձոձ ձալլաՑըլլաձի աը յըլլ ձոձ ժիճի կոլըլլըլլաձ Մըլլըլլա Տամի Տաաոձա աըրոպորտի աը յըլլըլլա. յըրոտի կաՑի ձարցիոտ ժիձիճ Տաճըլլաձ. աձ Տամի կաՑի ֆոլլորոձըլլա, ձոձ աձ ձարցիՅի առիս տաւիսի ֆըլլըլլա. աձ Տւրատեւ ժարՑըլլա յաձըլլաՅըլլա Տեձաձի ձա Տամի կաՑի, Տաոձալըլլաձի կաՑի Ցոլլա տձա աճըլլա. ոռի կաՑի ձալլիան յըլլըլլաձի տձա աճըլլա, Տաճըլլաձի կարցաձ աը հանս.

Տեքստերի վերլուծում.

Բերված նյութից երևում է, որ առաջին տեքստի հեղինակը համեմատաբար լավ է տիրապետում վրացերենին, քան երկրորդ տեքստի հեղինակը: Բացի այդ, առաջին տեքստը ստեղծված է ադրբեջանալեզու ուսանողի կողմից, իսկ երկրորդը՝ պատկանում է հայալեզու երիտասարդի:

Նրանց թույլ տրված լեզվական սխալները տիպիկ են, այսպիսով, գրավորները ստուգելուց հետո ուսանողների ուշադրությունը կենտրոնացրեք հիմնական սխալների վրա: Սրանից հետո, պարբերության մակարդակին համապատասխան, տեքստերում ուշադրությունը կենտրոնացնում ենք իմաստային կրկնաբանության և տրամաբանական հաջորդականության վրա: Ինչպես տեսնում ենք, երկու ուսանողներն էլ նկարագրման ժամանակ մի քանի անգամ կրկնել են միևնույն տեղեկությունը. առաջին դեպքում ձեռքի բեռան, երկրորդ դեպքում՝ այծոռի և ուղևորների տեսքով:

Պետք է նշել, որ այս առաջադրանքը կատարել է 50 ուսանող, և ընդգծվել է ևս մի քանի ընդհանուր միտում: Տեքստերի հեղինակները պակաս են կիրառում ածական անունները: Քիչ է նաև անդամ-շաղկապների կիրառության թիվը նախադասության տրամաբանական կապակցության նպատակով: Գրելու ուսուցման ընթացքում հենց այս թույլ կողմերի վրա պետք է կենտրոնացնեք գրել սովորողների ուշադրությունը և վերևում բերված ռազմավարությունների կիրառությամբ սովորեցնենք լավ կազմակերպված պարբերության կառուցման եղանակները և միջոցները:

Ի վերջո, կարելի է ասել, որ գրել սովորեցնելը, այնպես, ինչպես ինքը՝ գրելը, բարդ գործընթաց է, այդ պատճառով այն լավ պետք է պլանավորվի և

կազմակերպվի, որպեսզի սովորողը կարողանա գոյություն ունեցած, պաշտոնական գիտելիքից, պայմանական գիտելիքը ներառյալ, և դրանց վրա հիմնվելով, ստեղծել տարբեր տեսակ տեքստեր, կոնկրետ տեղեկությունը ընդհանրացնել կոգնիտային, մետակոգնիտային և սոցիալական ռազմավարությունների միջոցով: Երկրորդ լեզվի գրավոր բաղադրամասի ուսուցումը չպետք է սահմանափակվի միայն սովորողի լեզվաբանական իրազեկությունների բարձրացմամբ, դասի/դասախոսության գործընթացում, կոնկրետ նպատակին համապատասխան, կոնկրետ աստիճանների և մակարդակների նախատեսմամբ, էֆեկտիվ արդյունք ստանալու նպատակով, գիտակցված և չափավոր պետք է օգտվեն մի քանի ռազմավարություններից: Վերջում, եզրակացության տեսքով, տրված է սխեմա, որում ամփոփված են ուսուցման տարբեր ասպեկտներ և դրանց հատվելը լեզվի տիրապետման այս կամ այն աստիճանում, ինչը գրելու ուսուցմամբ հետաքրքրված անձանց հնարավորություն կտա ուսումնական գործընթացի մեջ գրավոր խնդիրների և դրանց հետ կապված բարդությունների հաղթահարման նպատակով ուշադրությունը կենտրոնացնել տարբեր և փոխադարձաբար հատվող ռազմավարության վրա:

Լեզվի տիրապետման մակարդակը	Իրազեկություն	Գրելու գործընթացի մակարդակը	Ռազմավարություններ
A1	Մոտորային կարողություններ. քերականական իրազեկություն, ռազմավարական իրազեկություն	Նախադասության մակարդակ	Թելադրություն, հարցերին պատասխանել, պարզ տեքստը փոխել ըստ բայի դեմքերի, նկարագրել:
A2	Քերականական իրազեկություն, ռազմավարական իրազեկություն, սոցիոմշակութային իրազեկություն	Նախադասության մակարդակ, պարբերության մակարդակ	Բառերի տեղադրում, տրված բառերով նախադասություններ կազմել, ավարտել նախադասությունը, նախադասությունն ուղղել, հարցերին պատասխանել, տրված թեմայով նախադասություն կազմել, նկարագրել երևույթը/փաստը, իրը մի քանի նախադասությամբ ստուգել:

<p>B1</p>	<p>Քերականական իրազեկություն, ռազմավարական իրազեկություն, սոցիոմշակութային իրազեկություն</p>	<p>Նախադասության մակարդակ, պարբերության մակարդակ</p>	<p>Նախադասության կապակցման միջոցները, զուգորդական հարցերին պատասխանել, հարցերին փաստարկված պատասխանել, հանգուցային նախադասություն կազմել, հանգուցային նախադասությունն ընդլայնել փաստարկներով, արտահայտել սեփական կարծիքը/ դիրքորոշումը, նախադասությունը դասավորել տրամաբանական հաջորդականությամբ, պարբերության ստեղծում, ստուգում:</p>
<p>B2</p>	<p>Քերականական իրազեկություն, ռազմավարական իրազեկություն, սոցիոմշակութային իրազեկություն, դիսկուրսիվ իրազեկություն</p>	<p>Պարբերության մակարդակ, փաստարկված տեքստի մակարդակ</p>	<p>Նախադասության կապակցման միջոցները, զուգորդական հարցերին պատասխանել, հարցերին փաստարկված պատասխանել, հանգուցային նախադասություն կազմել, հանգուցային նախադասությունն ընդլայնել փաստարկներով, արտահայտել սեփական կարծիքը/դիրքորոշումը, նախադասությունը դասավորել տրամաբանական հաջորդականությամբ, պարբերության ստեղծում, ստուգում:</p>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվի տիրապետման մակարդակների եվրոպական համակարգ - The National Capital Language Resource Center, Washington, DC | Teaching Goals and Methods Goal: Communicative Competence Web site for college and university language instructors! <http://www.nclrc.org/essentials/goalsmethods/goal.htm>

Հաղորդակցական իրազեկության դասագիրք - Handbook of Communication Competence; By Gert Rickheit, Hans Strohnerv, 2009.

Մայլես, 2002 – Ջոան Մայլես, Երկրորդ լեզվի գրելու բաղադրամասը և հետազոտում. Գրելու գործընթացը և ուսանողների աշխատությունների սխալների վերլուծություն, „Second language writing and research: The writing process and error analysis in student texts~, **Teaching English as a Second or Foreign Language**, vol. 6, 2., <http://www.cc.kyoto-su.ac.jp/information/tesl-ej/ej22/a1.html>

Մելի, Չամոտ, 1990 – O'Malley, J. & Chamot, A. (1990). *Learning strategies in second language acquisition*. Cambridge, England: Cambridge University Press.

Նվաճումների և մեթոդների ուսուցում, Հաղորդակցական իրազեկություն, 2012: Վրաց լեզվի տիրապետման մակարդակների նկարագիր, 2006

Պուրպուրա, 1999 - Purpura, J. (1999). *Strategy use and second language test performance: A structural equation modeling approach*. Cambridge: Cambridge University Press

Վրաց լեզվի տիրապետման մակարդակները, 2006 - Վրաց լեզվի տիրապետման մակարդակները, Մարիկա Օձելի, 2006, Թբիլիսի, Սախմեդո հրատարակչություն

Giuli Shabashvili

Ivane Javakhishvili Tbilisi State University

Difficulties and their Solutions Emerged during the Second Language Writing Process

ABSTRACT

The paper discusses the problems with second language writing and presents the main reasons of it. The paper shows some appropriate solutions and considers several aspects of language teaching: levels of language acquisition, Language teaching competences, three main patterns (sentence, paragraph and text). It is analyzed which of the second language teaching approaches must be used and which competences are necessary to obtain - linguistic competence, discourse competence, social-linguistic competence, communication competence or cultural competence. Our claim is that it depends on the level of the language acquisition. On the A1 level implementation of linguistic and strategic competences is urgent, the basic is teaching sentence pattern as well. The main teaching strategies for this level might be dictation, answering the questions, changing the text by the personal verbs, simple describe the things, events, facts. In opposite, the next level of language acquisition deals with the improving of linguistic, strategic and sociocultural competences. the sentence pattern must be complicated with the paragraph pattern and the students might be asked to put the words, complete sentences, create sentences, answer the questions, explain the author's position, support the ideas with light arguments and use modal meanings. Step by step encounters of the different aspects become complicated. On the beginning level teaching of second language writing must be based on the process approach, as for the cognitive activities, they must be implemented in the classroom on the higher level of language proficiency. As a conclusion, the final schema shows the most appropriate combinations of language acquisition levels, language teaching competences, three main patterns and concrete strategies.